

Լ. Գ. ԴԱՆԵՂՅԱՆ, Առաքել Դավրիժեցու երկը ուղղես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, 234 էջ:

Ինչպես հայտնի է, հայկական աղբյուրները հարուստ են հարևան ժողովուրդների պատմության վերաբերյալ վկայություններով: Դրանցից է Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանցը», որի մասնավորապես Իրանին վերաբերող տվյալները առանձին արժեք են ներկայացնում Իրանի պատմաբանների համար, քանի որ «Դավրիժեցին հնարավորություն է ունեցել և նպատակ՝ տալ պատմության ճշմարիտ պատկերը, առաջ սքողելու պարսից շահերի քաղաքականության ստվերոտ կողմերը» (էջ 26): Մենագրության հեղինակի այս միտքը բազմիցս հաստատվում է ողջ աշխատության մեջ:

Լ. Դանեղյանը բավականին հանգամանորեն քննում է Սեֆյան Իրանի XVII դ. առաջին վեց տասնամյակների պատմությունը՝ Առաքել Դավրիժեցու տվյալները ղուգահեռաբար համադրելով պարսկական և այլ աղբյուրների հետ: Միաժամանակ, առաջնորդվելով Ա. Դավրիժեցու երկով, նա անդադառնում է մերթ հայ, վրացի և այլ ժողովուրդների պատմության առանձին պրոբլեմներին, մերթ Թուրքիայում ջալալիների շարժմանը, մերթ իրանա-թուրքական պատերազմների պատմությանը, համեմատելով, լրացնելով, ճշգրտելով փաստեր, թվեր, տարեթվեր, աշխարհագրական անուններ ու անձնանուններ:

Հանգամանորեն վերլուծելով Ա. Դավրիժեցու նկարագրած ժամանակաշրջանի հայ-իրանական հարաբերություններն ըստ հայկական ու պարսկական աղբյուրների, Լ. Դանեղյանը իր առջև դնում է պատմաբաններին վաղուց ի վեր հետաքրքրող այն հարցը, թե լի՞ օգտվել, արդյոք, հայ պատմիչը Իսկանդար-բեկ Թուրքեմանի (Մունշի) երկից: Այդ կապակցությամբ հեղինակը մանրազնին զուգահեռում է Ա. Դավրիժեցու և պարսկական պալատական պատմագրի նկարագրած առանձին իրադարձություններ և զալիս այն ճշմարիտ հզրակցության, որ Ա. Դավրիժեցու երկը գրվել է միանգամայն ինքնուրույն և անկախ պարսկական աղբյուրից:

Լ. Դանեղյանը նշում է, որ ի տարբերություն նույն ժամանակաշրջանին նվիրված պարսկական աղբյուրների, որոնք լի են շահերի որսի, զվարճալիքների, ուխտագնացությունների և այլնի նկարագրություններով, Ա. Դավրիժեցին տալիս է պատմության օբյեկտիվ պատկերը, ժողովուրդների կյանքում ճակատագրական դեր խաղացած իրադարձությունների ճշմարիտ ընունթագիրը:

Մենագրությունը բաղկացած է չորս գլուխներից, որոնք հետազոտողը նվիրել է ընտրված թեմայի չորս հանգուցային պրոբլեմներին: Առաջին գլխում հանգամանորեն վերլուծվում է Ա. Դավրիժեցու «Գիրք պատմութեանցը» որպես պատմական երկ, նշվում են նրա աղբյուրները, հստակորեն առանձնացվում այն գլուխները, որոնք չեն պատկանում պատմիչի գրչին, բերվում են կենսագրական տվյալներ հեղինակի մասին, նշվում նրա դիտելիքների ու հետաքրքրությունների լայն սահմանները, քաջատեղյակությունը իրեն ժամանակակից գիտությանը և արվեստին, խոսվում է նրա պատասխանատվության զգացման և հաղորդած տեղեկությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքի մասին: Պատմիչի այս հատկանիշները, արձանագրում է հեղինակը, թահնգեցնում է նրան, որ հավաստիությունը, լինելով հեղինակի մտահոգության գլխավոր առարկան, նաև օբյեկտիվ հոգ է ձեռք բերում և դառնում «Պատմության» ոգին ու սկզբունքը» (էջ 26):

Այստեղ ընթերցողը կգտնի նաև հարցի պատմության տեսությունը¹, ինչպես և ակնարկ Ա. Դավրիժեցու երկի՝ գոյություն ունեցած ձեռագիր օրինակների և հրատարակությունների մասին:

¹ Ափսոսանքով պետք է այստեղ վերապահություն անենք, որ ընայած հարգանքի արժանի ուշադրությանը՝ բարձրացված հարցերի վերաբերյալ բոլոր՝ մեծ թե փոքր հրատարակված աշխատանքների նկատմամբ, հետազոտողը, անհասկանալի պատճառներով, տեսադաշտից դուրս է թողել որոշ, թեկուզև ոչ մեծ, բայց կարևոր և անմիջականորեն թեմային վերաբերող հրապարակումներ:

Յույց տալով Ա. Դավրիժեցու «Գիրք պատմութեանցի» պատմագրական և գեղարվեստական արժեքը, ընդգծելով նրա բոլոր արժանիքներն ու թերությունները, Լ. Դանեղյանը եզրակացրել է, որ քննվող աղբյուրի «համընդհանուր ճանաչումն արդյունք է ոչ միայն այն բանի. որ նրա հեղինակն ականատես է, ականջալուր և անաշու, այլև՝ որովհետև նա տեղեկացնում է Հայաստանից բացի նաև այլ երկրների մասին, չաղորդելով այնպիսի տվյալներ, որոնք քաղակալում են նույն դարաշրջանի այլ պատմիչների երկերում» (էջ 46)։

Նրկորոդ, ամենաընդարձակ գլուխը նվիրված է Իրանի XVII դ. սկզբի պատմության՝ Ա. Դավրիժեցու լուսարանմանը։ Անդրկովկասին տիրելու համար Թուրքիայի հետ մրցակցող Իրանի քաղաքական պատմությունը «Գիրք պատմութեանցի» առանցքային հարցերից է։ Այդ պատճառով էլ Լ. Դանեղյանն իր հետազոտության երկրորդ գլխում վերլուծում է հայ պատմագրի, ըստ էության, ամբողջ երկը։ Այստեղ հեղինակը հանդես է բերում նյութի լավ իմացություն՝ ինչպես աղբյուրների, այնպես էլ Իրանի և Թուրքիայի փոխհարաբերությունների պատմությունը նվիրված ամբողջ գրականության։

Նական ատանձին դեպքերում՝ քննելով Ա. Դավրիժեցու լուսարանած այս կամ այն հարցը, հեղինակը, տարվելով սկզբնաղբյուրով, զլանում է նշել իրեն նախորդող հետազոտողների կատարած աշխատանքը, նրանց ծառայությունը պրոբլեմի լուծման մեջ։

Այս րաժնում արժեքավոր է, մեր կարծիքով, Ա. Դավրիժեցու՝ ժամանակին սխալ հասկացված ու թարգմանված տեղեկությունների ճշտումը, որոնք այդպես էլ անճիշտ մեկնաբանություններ մինչև օրս փոխանցվում են մի աշխատությունից մյուսը։ Նույնպես արժեքավոր է հեղինակի ձգտումը ոչ միայն ցույց տալու Ա. Դավրիժեցու բացասական վերաբերմունքը ջալալիների և Հայաստանի տարածքում նրանց գործունեության նկատմամբ, այլև փաստերի մանրամասն քննության միջոցով տալ այդպիսի վերաբերմունքի օբյեկտիվ պատճառները (էջ 126—127)։ Մենագրության երկրորդ գլխի ռաժններից մեկը նվիրված է իրանական պատմագիտության մեջ շահ Աբբաս I-ի արտաքին քաղաքականության լուսարանմանը։ Հեղինակը հանգամանորեն քննում է նրա ձեռնարկումներից մեկը՝ այսպես կոչված «մեծ սուրգունը» (մեծ զաղթ), Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերը, ցույց է տալիս իրանական պատմագրության տեղեկացիությունը այդ էջերի լուսարանման մեջ, բացահայտելով Իրանի պատմաբանների տեսակետի սնանկությունը։ Ա. Դավրիժեցու հաղորդած փաստերը համեմատվում են այլ աղբյուրների (մասնավորապես պարսկական) հետ, վերլուծվում են թվեր, որոշվում զաղթեցվածների մոտավոր թիվը, հետազոտվում է նրանց հետագա ճակատագիրը, նրանց գերը Իրանի, մասնավորապես Սեֆեդիների նոր մայրաքաղաքի տնտեսական զարգացման մեջ։ Կոնկրետ փաստերի հիման վրա Լ. Դանեղյանը ցույց է տալիս, որ հայերի բռնազաղթն Իրան այնքան էր շահավետ շահական կառավարությանը, որ վերջինս հետագայում հաճախ դիմում էր այդ միջոցին։

Իրանական պատմագիտության մեջ բռնազաղթին անդրադառնալիս շեշտը միշտ դրվել է գլխավորապես հարցի ռազմա-ստրատեգիական կողմի վրա։ Մինչդեռ Ա. Դավրիժեցին իրեն հատուկ մանրակրկիտությամբ խոսում է շահ Աբբաս I-ի հետապնդած ինչպես ստրատեգիական, այնպես էլ տնտեսական նպատակների մասին։ Լ. Դանեղյանը քննում է տվյալները և, ինչպես միշտ, սգտազործելով կողմնակի նյութեր, ապացուցում է Ա. Դավրիժեցու դիրքի ճշտությունը։ Այստեղ վերլուծվում են հակասական տվյալները մեծ բռնազաղթի տարեթվի, այդ ձեռնարկմանը ենթարկված շրջանների մասին, բացատրվում և ճշտվում են այդ տվյալները, որոնք գրեթե բոլոր դեպքերում համապատասխանում են պատմիչի տեղեկություններին։

«Մեծ սուրգունին» նվիրված գրականության և առկա աղբյուրների վերլուծությունը Լ. Դանեղյանին թույլ է տալիս փաստելու, որ պարսկական ու եվրոպական հեղինակների պնդումներն այն մասին, թե շահի գործողությունները հայ ժողովրդի համար իբր բարօրություն էին և կոչված էին փրկելու վերջինիս, տեղեկացիոգ են և շունեն ոչինչ ընդհանուր՝ իրականության հետ (էջ 108—109)։

Նույնպես է հետազոտողի ձգտումը գտնելու և հիմնավորելու Ա. Դավրիժեցու երկում պահպանված այն փաստերը, որոնք բնորոշում են հայ ժողովրդի պատմության սոցիալ-տնտեսական կողմերը (Իրանի պատմությանը վերաբերող նման փաստերն առանձնացված են մենագրության առանձին՝ երրորդ գլխում)։ Հեղինակը բազմիցս խոսում է զաղթեցված հայերի նկատմամբ պարսկական իշխանությունների դասակարգային մոտեցման մասին։ Աղբյուրի մեջ կա զաղթեցնողների հանդեպ հայ բնակչության անհնազանդության դեպքերի նկարագրություն։ Մենագրության մեջ այդ փաստերը նույնպես դարձել են ուսումնասիրման առարկա։ Լ. Դանեղյանը խնդիրներ է դնում և քննում գրանք՝ Ա. Դավրիժեցու տվյալներին համապատասխան,

բաշխուածութիւնը և զարգացման պրոցեսում: Զուգահեռաբար ընդունում կամ ժխտում է այդ հետազոտողների տեսակետը, բացահայտում այն հեղինակների հայացքների անճշտութիւնը, որոնք կամ թե՛ ակամա աղավաղել են պատմական ճշմարտութիւնը, վկայակոչում է Ա. Դավրիժեցու օբյեկտիվութիւնը հաստատող լրացուցիչ նյութեր այլ աղբյուրներից: Այդ բոլորը հետազոտութեան դրական կողմերն են:

Գոյութիւն ունեցած աղբյուրների համեմատական վերլուծութիւնը, նրանց անհամապատասխանութեան առկայութիւնը ոչ միայն փաստերի ու երևույթների, այլև նրանց զնահատման հարցում է. Դանեղյանին բերում են հետևյալ ճիշտ եզրակացութեան. «Աղբյուրների տվյալները համեմատելիս աչքի է զարնում մի բնորոշ գիծ. միևնույն իրադարձությունները նկարագրված են տարբեր լույսի տակ՝ թելադրված աղբյուրի հեղինակի դիրքորոշմամբ» (էջ 70): Հեղինակը փաստերի հիման վրա ցույց է տալիս հայ պատմիչի վկայութիւնների հավաստիութիւնն ու օբյեկտիվութիւնը. ավելին, նրա ջանքերը՝ գտնելու այս կամ այն երևույթի սուբյեկտ պատճառը (էջ 77):

Ուսումնասիրութեան երրորդ գլուխը նվիրված է Շիրք պատմութեանցում: Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի լուսարանմանը: Այդ պրոբլեմին հատկացվել է հատուկ գլուխ, քանի որ թե՛ անատ, բայց ամբողջ գրքով մեկ ցրված ու կցկտոր նյութը որոշակի պատմագրական արժեք է ներկայացնում և կարող է ազդեալոր լինել XVII դ. Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրութեան համար: Լ. Դանեղյանը Ա. Դավրիժեցու տվյալները համեմատում է հակական այլ աղբյուրների (Զաքարիա Փանտրեցի, Խաչատուր Զուգայեցի, Զաքարիա Աղուեցի), ինչպես նաև իրանական, եվրոպական ու ռուսական աղբյուրների տեղեկութիւնների հետ և դրա հիման վրա վերարտադրում Սեֆյան Իրանի XVII դ. առաջին կեսի սոցիալ-տնտեսական կյանքի պատմութիւնը:

Շիրք պատմութեանցում բավականին տեղ է զբաղեցնում Իրանում ազգային փոքրամասնութիւնների (հայեր, վրացիներ, աղբրեջանցիներ, հրեաներ, գերբեր և այլն) վիճակի, Սեֆյան դինաստիայի կառավարողների կողմից նրանց նկատմամբ վարած ձուլման քաղաքականութեան հարցը: Այդ կապակցութեամբ է. Դանեղյանը գրախոսվող մենագրութեան շարքում ցույց է տալիս, որ Սեֆիւիների վերաբերմունքը Իրանի այլակրոն համայնքների տարբեր շերտերի նկատմամբ զանազան ժամանակահատվածներում եղել է տարբեր և պայմանավորվել է այդ էտապում երկրի քաղաքական ու տնտեսական շահերով: Հարուստ վաճառականներին և բարձրաստիճան հոգևորականութեանը, ինչպես դա երևում է երկի տվյալներից, շահ Արքաա I-ը հիմնականում հովանավորում էր Իսկայի համայնքների աշխատավորական զանգվածների լայն շերտերը տեղի բնակչութեան հետ միասին ոչ միայն ենթարկվում էին ֆեոդալական շահագործման, այլև հսկայական ծանրութեամբ նրանց ճնշում էր նաև կրոնական ու ազգային խտրականութիւնը:

Հետազոտութեան եզրափակիչ բաժինը նվիրված է պարսկական թագավորների տոհմաբանութեանը, որը կազմել է Ա. Դավրիժեցին: Տոհմաբանութեանն այստեղ մանրամասն վերլուծվում է, քանի որ, ինչպես իրավացիորեն նկատում է հեղինակը, շնայած առանձին անճշտութիւններին, այն ընդհանուր առմամբ լրացնում կամ հաստատում է այլ աղբյուրների տեղեկութիւնները: Հետազոտողի ճշգրտումները և դիտողութիւններն առանձին արժեք են տալիս մենագրութեան հիշյալ բաժնին և Առաքել Դավրիժեցու գրչին պատկանող տոհմաբանութեանը:

Աշխատութեան սկզբում նշելով իր խնդիրները, Լ. Դանեղյանը գրում է. «Թե՛ և շատ հեղինակներ են անդրադարձել Դավրիժեցուն, սակայն քիչ են փորձերը՝ հանգամանորեն վերլուծելու նրա գործը, աշխարհայացքը և Պատմութեան հետ կապված շատ հարցեր» (էջ 37): Կարելի է վստահորեն ասել, որ հեղինակը պատվով է կատարել Ա. Դավրիժեցու երկին և նրա հետ կապված այլ հարցերին վերաբերող այստեղ թվարկված խնդիրները: Ծանկայի կլինեն, որ նույն այդ հստակութեամբ դրվեր ու լուծվեր պատմիչի աշխարհայացքի հարցը: Պատմագիրը պարունակում է առատ նյութ, որը հնարավորութիւն է տալիս դատել այդ մասին: Լ. Դանեղյանի մենագրութեան մեջ չկա հատուկ բաժին՝ նվիրված այդ պրոբլեմին: Իսկ հեղինակի դատողութիւնները՝ արտահայտված մի քանի պարբերութեամբ, թողնում են, ավելի շուտ, այդ առթիվ հանրահայտ հեղինակների (Մ. Արեղյան, Գ. Գապակեճյան) կարծիքների արձանագրման, քան իր՝ հետազոտողի, հստակ արտահայտված կարծիքի տպավորութիւն:

Մենագրութեանը կցված են ռուսերեն լեզվով սպառելի ամփոփում, որն ընդգրկում է ուսումնասիրութեան բոլոր հանգուցային հարցերը և ընդհանուր պատկերացում տալիս նրանում արժարժեքի պրոբլեմների մասին, բավական մանրամասն ու լավ կազմված օգտագործված աղբյուրների ու գրականութեան ցուցակ և, վերջապէս, անձնանունների ու տեղանունների ցան-

կերւ Ափսոսանքով պետք է նշել, որ ցանկերը կազմված են շատ անփութ՝ տողատակերի ոչ բոլոր անուններն ընդգրկելու առումով: Այդ անփութութիւնն անսպասելի է և չափազանց անցանկալի մի աշխատութեան մէջ, որն ամբողջութեամբ կրում է հեղինակի ուշադիր ու հոգատար ձեռքի կնիքը:

Մենադրութեան արժանիքների թվում պետք է նշել հեղինակի լավ լեզուն ու ոճը:

Լ. Դանեղյանի աշխատութիւնը որոշակի արժեք է ներկայացնում նաև այն առումով, որ ընթերցողին հնարավորութիւն է տալիս ծանոթանալ ոչ բոլորին մատչելի պարսկերեն լեզվով դրականութեանը՝ աղբյուրներ և ուսումնասիրութիւններ, որոնք ընդգրկում են Ա. Դավրիժեցու ուշադրութեան կենտրոնում դրանք պարբերականները: Դրվատանքի և շնորհակալութեան է արժանի Լ. Դանեղյանի աշխատանքը նաև պատմիչի կյանքի ու դործունեության վերաբերյալ ցարուցիր, կցկտուր տեղեկութիւններն ի մի բերելու, սխտեմավորելու և ուսումնասիրելու ուղղութեամբ, այնպես որ հեղինակի սկզբնական ծրագրի համաձայն Սեֆյան Իրանի XVII դ. պատմության տեսանկյունից «Գիրք պատմութեանցի» զնահատմանը նվիրված աշխատութիւնը դերա՛ն է իր շրջանակներից և վերածվել Առաքել Դավրիժեցու և նրա երկի վերաբերյալ լուրջ ուսումնասիրության:

ԼԵՆԱ ԽԱՆԼԱՐՅԱՆ.

Պատմական գիտությունների բեկեմուն

Է.ՎԱ. ԳԵՎՈՐԳՅԱՆ-ՐԱԳԻ, Հայ-հունգարական գրական առնչությունները և «Արմենիա» ամսագիրը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երևան, 1979, 186 էջ:

Է. Գևորգյան-Քազիի վերջերս հրապարակված «Հայ-հունգարական գրական առնչությունները և «Արմենիա» ամսագիրը» գիրքը նշանակալի ներդրում է Հայ-հունգարական մշակութային եռյակի ուսումնասիրության առումով: Հունգարահայ գաղթօջախի հասարակական-տնտեսական, հոգևոր կյանքի շուրջը գրվել են առանձին հետազոտություններ, հոգվածներ, վեր է հանվել հայ ժողովրդի տարագիր մի հատվածի սոցիալական վիճակը, կենցաղը, ազգագրությունը: Սակայն տակավին քննված ու զնահատված չէր հունգարահայերի հոգևոր կյանքի կարևոր բնագավառներից մեկը՝ գրականութիւնը: Լրջորեն գիտակցելով իր կատարած գործի կարևորութիւնը, տիրապետելով հունգարերենին ու հայերենին, Է. Գևորգյան-Քազին իր գրքում հանդամանորին քննութեան է առնում XIX դ. վերջի և XX դ. սկզբի հունգարահայ գաղթի պատմութիւնը, հասարակական-հոգևոր կյանքը, հունգարահայերի հունգարերեն լեզվով հրատարակած «Արմենիա» (1887—1907) ամսագրի գրական, գրականագիտական, հրապարակախոսական, բանահյուսական ամբողջ նյութը:

Գրքի հինգ զուգններից առաջինը կրում է «Հունգարահայերը և գաղթավայրի մշակութային ու հոգևոր դարձները XIX դարի վերջերին և XX-ի սկզբներին» խորագիրը: Շարադրելով Հունգարիայի տարածքում հայերի հաստատվելու, բնակավայրեր հիմնելու, երկրի լիիրավ քաղաքացիներ դառնալու պատմութիւնը, թվարկելով հայ գերդաստաններից սերած այն դործիչներին, որոնք Հունգարիայի հասարակական-քաղաքական կյանքում կատարել են զնահատելի դեր, հեղինակը անդրադառնում է մասնավորապես տրանսիլվանահայ գաղթօջախի կազմավորմանը, համայնքի ամրապնդման համար պայքարին: Դրա արտաշատութիւններից մեկն էլ «Արմենիա» ամսագրի հրատարակութիւնն էր, որի նշանակութիւնն անզնահատելի է հունգարահասարակայնութեանը հայ մշակութիւնի ծանոթացնելու գործում: Այս առումով մեծ է ամսագրի հրատարակիչ Խաչիկ Սոնգոտյանի վաստակը: Հեղինակի ընձեռած տվյալներով և՛ Սոնգոտյանը ամսագրում գրել է շուրջ 400 հոդված, չհաշված մի քանի համարներ, որոնք ամբողջովին պատկանում են նրա գրչին: Բացի դրանից և՛ Սոնգոտյանը շարադրել է Գեոլա քաղաքի եռահատոր պատմութիւնը, «Հունգարահայ ազգագրութիւնը» (1903), «Հունգարների ծագումը և հին հայրենիքը» (1905), հունգարերեն թարգմանել է Մ. Խորենացու «Հայոց պատմութիւնը» (1892) և՛ Սոնգոտյանը ամսագիրը գլխավորել է մինչև իր մահը (1907), որից հետո այն դադարել է:

Հետազոտողի ելակետերը ճիշտ են ինչպես խմբագրի գործունեութիւնը, այնպես էլ ամսագրի ուղղութիւնն ու նպատակները բնութագրելիս. «Դանդաղեցնել հայերի ձուլումը, փրկել հունգարահայերին օտարացումից, նպաստել հայ ու հունգար ժողովուրդների փոխազդած վստա-